ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐ՝ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ինչ վերաբերում է անվճար դասագրքերին, ապա կստանան հանրային դպրոցների բոլոր աշակերտները, մասնավոր դպրոցների սոցիալապես անապահով աշակերտները, ում վարկանիշային միավորը 70001-ից ցածր է, ինչպես նաեւ բռնազավթված Ախալգորիի ու Աբխազիայի տարածքում գտնվող վրացական դպրոցների աշակերտները: Այս տարի կրթության նախարարությունն առաջին դասարանցիների համար ձեռք է բերել 55300, գերազանցիկների համար՝ 2700, իսկ դասղեկների համար՝ 2530 համակարգիչ:

Նշենք, որ այս ուսումնական տարում Վրաստանի հանրային դպրոցների առաջին դասարանցիների թիվը կազմել է 53540, իսկ աշակերտության ընդհանուր թիվը՝ 509120:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՋԵՋԵԼԱՎԱ. «ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳԼԽԱՎՈՐ ՕՂԱԿԸ ԱՇԱԿԵՐՏՆ Է, ԱՊԱ՝ ՈՒՍՈՒՑԻՉԸ»

Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Ալեքսանդր Ջեջելավան նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ հատուկ ուղերձով դիմել է մանկավարժներին:

Ալեքսանդր Ջեջելավայի խոսքերով, կրթական համակարգում գլխավոր օղակը աշակերտն է, ապա՝ ուսուցիչը, ուստիեւ կրթական համակարգի բարեփոխումը, առաջին հերթին, պետք է կողմնորոշված լինի դեպի աշակերտը: «Ըստ իս, մեր համակարգում գլխավորն աշակերտն է, ապա՝ ուսուցիչը: Այնուհետեւ՝ դպրոցի տնօրենը, ռեսուրս-կենտրոնի ղեկավարը, նախարարը եւ այլոք: Հետեւաբար, գտնում եմ, որ այդ ոլորտում իրականացվող բարեփոխումները, նախեւառաջ, պետք է կողմնորոշված լինեն դեպի աշակերտը, ապա՝ ուսուցիչը»,- նշված է նախարարի ուղերձում:

Խոսելով ուսուցիչների աշխատանքի գնահատման մասին՝ նախարարը հայտարարեց, որ ուսուցչի աշխատանքը ըստ արժանվույն չի գնահատվում: Նրա խոսքերով, եթե որեւէ բան չի ստացվում, ապա մեղադրում են ուսուցչին, թեպետ դա արդարացի չէ: Նախարարի հավաստմամբ, ուսուցչի հանդեպ երախտագիությունը պետք է արտահայտվի ոչ միայն խոսքով, այլեւ՝ գործով: «Մեզ մոտ ուսուցչի աշխատանքն այնպես չի գնահատվում, ինչպես հարկն է: Ընդհանուր առմամբ, մեր շրջանում մանկավարժությունը չգնահատվող գործ է: Այդ մասին հաճախ է գրվում: Երբ երեխան հաղթում է որեւէ օլիմպիադայում, ասում են, որ նա տաղանդավոր է, սակայն, երբ ինչ-որ բան չի ստացվում, ապա մեղադրում են ուսուցչին: Դա անարդար վերաբերմունք է այդ մասնագիտության տեր մարդկանց նկատմամբ»,- հայտարարեց Ալեքսանդր Ջանելիձեն եւ հավելեց, որ պետք է ամեն ինչ արվի, որպեսզի վերականգնվի ուսուցչի բարի անունն ու հեղինակությունը: «Ցավոք, մենք նսեմացրինք ուսուցչի մասնագիտությունը, այդ թվում՝ բազմաթիվ քննություններով, թեստերով, փոփոխություններով, բարեփոխումներով, փորձարկումներով եւ անհարգի վերաբերմունքով: Խոստանում եմ, որ այդ դիրքորոշումը կփոխվի, եւ ձեր աշխատանքը բոլորի կողմից կգնահատվի: Առանց դրա, բոլոր բարեփոխումները կորցնում են իրենց իմաստը»,- ասված է կրթության նախարարի հեռուստաուղերձում»:

ԱՎԱՆԴՈՒՅԹ

ԱՇՈՒՂ ՋԻՎԱՆՈՒ ՕՐԸ ՆՇՎԵՑ ԱՆՆԱԽԱԴԵՊ ՈՒ ԲԱՅԱՌԻԿ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՈՎ

Ինչպես արդեն հաղորդվել էր «Վրաստան» թերթի նախորդ համարում, այս տարի Ջիվանու օրերը սկսվեցին Թբիլիսիում, Խոջիվանքի պանթեոնում, ուր ծաղիկներով, Կարծախից բերված հող ու ջրով օծվեց Մեծն աշուղի շիրիմը, ապա հաջորդ օրը՝ օգոստոսի 27-ին՝ կիրակի օրը, Ախալքալաքիի շրջանի Կարծախ գյուղում հանդիսավորապես բացվեց Ջիվանու տուն-թանգարանը:

Օգոստոսի 27-ին Ջիվանու տոնակատարությունների օրվա մեկնարկը տրվեց Կարծախի Սուրբ Հովհաննես Կարապետ եկեղեցում, որտեղ Սուրբ պատարագ մատուցեց Վիրահայոց թեմի Ջավախքի ընդհանուր փոխանորդության առաջնորդ Հայր Բաբգէն վարդապետ Սալբիյանը: Պատարագին հաջորդեց հարգանքի տուրք եւ ծաղիկների խոնարհում Ջիվանու կիսանդրիին:

Ջավախքի աջակցության հիմնադրամի (ՋԱՀ) հոգաբարձուների խորհրդի նախագահ Սոս Սահակյանը իր ողջույնի խոսքում ընդգծեց տուն-թանգարանի գոյությունը՝ շեշտադրելով վերջինիս՝ խորհրդային տարիներից հետո տարածաշրջանում բացված մերօրյա առաջին թանգարանը լինելու հանգամանքը:

Ողջույնի խոսքով հանդես եկան Վրաստանի քաղաքացիական հավասարության եւ հաշտության հարցերով պետնախարարի առաջին տեղակալ Պետրե Կանկավան եւ Հայաստանի մշակույթի նախարարի առաջին տեղակալ Արթուր Պողոսյանը:

Կարմիր ժապավենը կտրելուց հետո, հյուրերի առջեւ իր դռները բացեց Ջիվանու տուն-թանգարանը, որի ցուցասրահում ներկայացված են Մեծն աշուղի կյանքի ու ստեղծագործությանը վերաբերող բազմաթիվ ուշագրավ նմուշներ:

Ինչպես իր խոսքում նշեց ՋԱՀ-ի գործադիր տնօրեն Աշոտ Հակոբյանը. «Այսօր ավարտվեց տուն-թանգարանի հիմնադրման աշխատանքների առաջին փուլը, բայց միաժամանակ մեկնարկեց եւ երկրորդ փուլը»: Իսկ տուն-թանգարանի ետնամասի աշխատանքների մեկնարկը տրվեց բազմաթիվ հայրենասեր եւ ջիվանիասեր նվիրատուների՝ աջակցություն ցուցաբերելու մեծ պատրաստակամության շնորհիվ, նվիրատուներ, ովքեր ՋԱՀ-ի կողքին են եղել նաեւ տուն-թանգարանի հիմնադրման առաջին փուլի ողջ ընթացքում:

Կարծախ գյուղում Ջիվանու տուն-թանգարանի հիմնման ծրագիրը «Ջավախքին աջակցություն» հիմնադրամի 2016թ. գլխավոր ծրագիրն էր: Տուն-թանգարանի հիմնմանը ամենամեծ աջակցությունը ցուցաբերել է ՋԱՀ-ի հոգաբարձուների խորհուրդը: Ծրագրի իրականացման ամենաառաջին իսկ փուլից հիմնադրամի կողքին են եղել նաեւ Ռուսաստանում, Վրաստանում, Հայաստանում բնակվող մի շարք հայրենակից-բարերարներ, որոնց թվում են նաեւ ծագումով ոչ ջավախքցիներ:

Գործընթացին անմասն չի մնացել նաեւ Ախալքալաքիի տեղական իշխանությունը, որն իրականացրել է տուն-թանգարանի հարակից տարածքի արտաքին բարեկարգման եւ լուսավորության ապահովումը, եւ այս ամենի արդյունքում այսօր ունենք տուն-թանգարան, որը ոչ միայն Մեծն աշուղի մշակութային ժառանգության պահպանման ու ներկայացման հարթակ է, այլ նաեւ կարեւորագույն քայլ՝ Կարծախում մշակութային կյանքի աշխուժացման եւ աշուղագիտական կենտրոնի հաստատման ուղղությամբ:

Միջոցառումների շարքի «վերջին կանգառը» Ախալքալաքին էր, որտեղ «Ոսկե ծիրան» կինոփառատոնի հիմնադիր տնօրեն, ռեժիսոր Հարություն Խաչատրյանի նախաձեռնությամբ դեռեւս 10 տարի առաջ տեղադրված Ջիվանու արձանի մոտ հարգանքի տուրք մատուցվեց, ներկայացվեց արձանի պատմությունն ու վերստին արժեւորվեց ու մեծարվեց Մեծն աշուղի ստեղծագործական ուղին ու մեզ հասած ժառանգությունը:

Միջոցառումներին ներկա էին մտավորականներ, հոգեւորականներ, արվեստագետներ, երաժշտագետներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, բազմաթիվ հայրենակիցներ ու ջիվանիասերներ Վրաստանի տարածաշրջաններից եւ Հայաստանից:

«ՎՐԱՍՏԱՆԻ» ՏԵՂԵԿԱՏՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ, ԴԱԴԱՐԵՑՄԱՆ, ԸՆԴՀԱՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Կենսաթոշակի դադարեցման պատճառ են հետեւյալ հանգամանքները.

Վրաստանի քաղաքացու կողմից վեց ամիս անընդմեջ կենսաթոշակը չվերցնելու դեպքում, կամ երբ վեց ամսվա ընթացքում անընդմեջ չի իրականացվում բանկային հաշվից նրան պատկանող գումարի հանումը, բացառությամբ՝ գործակալության խնամքի հոգածության ներքո գտնվող անչափահասների: Նաեւ այն հանգամանքի առկայությունը, երբ կենսաթոշակային հաշվից գումարները դուրս են բերվում երաշխավորագրով եւ երաշխավորագրի հանձնումից մեկ տարվա ընթացքում, երաշխավորագիրը չի նորացվում: Նաեւ այնպիսի հանգամանքի առկայությունը, երբ անձը կենսաթոշակն իրականացնում է կենսաթոշակի անցկացումը դեպոզիտի եւ մեկ տարի հետո անձամբ չի դիմում կենսաթոշակը հանձնող հաստատությանը համապատասխան դիմումով, սահմանափակ հնարավորություններ ունեցողի կարգավիճակով անձը՝ համապատասխան բժշկական հաստատություն սահմանված ժամկետում հարգելի պատճառով (գտնվում է հիվանդանոցում, առողջարանում կամ այլ ստացիոնար բժշկական հաստատությունում) չի ներկայանում ստուգման: Հատկանշական է, որ, վերոնշյալ դեպքերից բացի, հարգելի պատճառ է համարվում համապատասխան բժշկական հաստատության աշխատանքային աշխատակարգի խախտումը կամ ֆորսմաժորային իրավիճակը (տարերային աղետ, արտակարգ կամ ռազմական իրավիճակ):

Հարց.- *Որքա՞ն ժամանակում է վերականգնվում կենսաթոշակի հանձնումը սահմանափակ հնարավորություն ունեցող անձի կարգավիճակի վերահաստատման դեպքում:*

Պատասխան.- *Սահմանափակ հնարավորությունների կարգավիճակի կրկնական հաստատման դեպքում, կենսաթոշակի հանձնման վերականգնումը իրականացվում է այդ կարգավիճակի հաստատման օրվանից, եւ կենսաթոշակառուն ստանում է անցած ժամանակահատվածի համար նախատեսված կենսաթոշակը, սակայն՝ կենսաթոշակի հանձնման դադարեցումից առնվազն մեկ տարվա ընթացքում:*

Ինչ վերաբերում է կենսաթոշակի ընդհատմանը, ապա «Պետական կենսաթոշակների մասին» Վրաստանի օրենքի համաձայն, պատճառ կարող են հանդիսանալ հետեւյալ հանգամանքները. կենսաթոշակառուի մահը, հանրային գործունեությամբ զբաղվելը, Վրաստանից այլ վայր անձի մշտական տեղափոխումը, խնամազուրկ անձի 18 տարին լրանալը, օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի Վրաստանից վտարումը, դատարանի մեղադրական եզրակացության ուժի մեջ մտնելը, երբ անձի համար սահմանվում է ազատազրկում, սահմանափակ հնարավորությունների պատճառով կենսաթոշակի նշանակման համար համապատասխան կարգավիճակի կորուստը, սահմանափակ հնարավորություններով կարգավիճակ ունեցող անձի չներկայանալը բժշկական հաստատություն սահմանված ժամկետում, բացառությամբ հարգելի պատճառների: Չափավոր արտահայտված սահմանափակ հնարավորություն ունեցող անձի կողմից սահմանված ժամկետում բժշկական հանձնաժողովին չներկայանալը, Վրաստանի քաղաքացիությունից ազատվելը կամ Վրաստանի քաղաքացիություն կորցնելը, լրիվությամբ պետության խնամքի տակ գտնվելը, բացառությամբ՝ տարեց եւ սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց՝ պանսիոնատում, մանկատներում եւ այլն:

Հարց.- *Գուցե պարզաբանեք, թե քանի՞ տարի հետո է իրականացվում դադարեցված կենսաթոշակի ընդհատումը, եւ ո՞ր դեպքում է հնարավոր դրա վերականգնումը:*

Պատասխան.- *Դադարեցված կենսաթոշակի ընդհատումը իրականացվում է դադարեցումից երեք տարի անց: Վերոնշյալ պատճառներով կենսաթոշակի ընդհատման դեպքում, կենսաթոշակը չի տրվում այդ հանգամանքների սահմանման ամսից, իսկ դատական մեղադրական որոշման առկայության դեպքում՝ այդ որոշման օրենքի ուժ ստանալու օրվանից եւ վերականգնվում է համապատասխան մարմիններին գրավոր դիմումի ու համապատասխան փաստաթղթերի ներկայացման օրվանից:*

ԻՐԻՆԵ ՂԼՈՆՏԻ

Ð²ðò – ä²Î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Ü°ð

²èàÔæ²ä²ÐàôÂÚàôÜ

ԱՎԵԼՈՐԴ ՔԱՇԸ՝ ՍՊԱՌՆԱԼԻՔ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ

Այն, որ ավելորդ քաշը, իրոք, անցանկալի է, ակնհայտ փաստ է, սակայն որքանո՞վ է այդ փաստարկը հիմնավորված գիտականորեն:

Վ. Մարտիրոսյան

Նինոծմինդա

Բժիշկների միջազգային խումբը եկել է այն եզրակացության, որ ավելորդ քաշը կապված է քաղցկեղով հիվանդանալու վտանգի հետ: Հետազոտությունը հրապարակված է The New England Journal of Medicine-ում: Դրա մասին հակիրճ հաղորդել է Eurek Alert պարբերականը:

Ավելորդ քաշ ունեցող մարդկանց մոտ մեծ է ստամոքսի, լյարդի, լեղապարկի, ենթաստամոքսային գեղձի, ձվարանների, վահանաձեւ գեղձի քաղցկեղի, ինչպես նաեւ մենինգիոմայի (գլխուղեղի ուռուցքի) եւ միելոմայի առաջացման վտանգը:

Եթե տասը տարվա ընթացքում մարդուն հաջողվում է սահմանափակել իր քաշի ավելացումը, հիվանդությունների զարգացման հավանականությունը նվազում է: Այլապես գործընթացը կարող է անդառնալի հետեւանք ունենալ:

Աշխարհում շուրջ 600 մլն մեծահասակ եւ 110 մլն երեխա տառապում են ճարպակալումից: ԱՄՆ բնակչության մեկ երրորդը եւ Ռուսաստանի բնակչության քառորդ մասն ավելորդ քաշ ունի:

Ðà¶º´²ÜàôÂÚàôÜ

ԵՐԱԶՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հետաքրքիր է իմանալ՝ գիտականորեն ինչպե՞ս են բացատրում երազը: Դա մարդու ուղեղում ինքնին ծագող երեւո՞ւյթ է, թե՞ ունի բնական բացատրություն:

Զ. Սիմոնյան

Բաթումի

Ըստ ժամանակակից գիտության մեկնաբանման, երազները ծագում են հետեւյալ կերպ: Յուրաքանչյուր 90 րոպեն մեկ ուղեղի ցողունային հատվածը քաոսային կերպով ողջ ուղեղով էլեկտրական իմպուլսներ է սփռում: Դրանք պատկերներ են, զգացողություններ, մտքեր, բառեր, բույրեր կամ գույներ: Ուղեղի առաջնային հատվածն իր վրա է վերցնում այդ անկանոն հոսքի հիմնական հարվածը եւ ֆիլտրում դրանք՝ փորձելով կապակցել մեկ ընդհանուր պատմության մեջ: Այդ իմպուլսների մեծ մասը ջնջվում է մինչեւ ուղեղին հասնելը, հետեւաբար, այդ հատվածները մենք երազում չենք տեսնում: Մնացած մասից ուղեղը տրամաբանորեն կապակցված որեւէ պատմություն է կազմում: Այսինքն՝ այն, ինչ մենք տեսնում ենք, մեր տեսածի, լսածի, զգացածի, պատկերացրածի յուրօրինակ խառնուրդն է:

Սակայն, գիտական այս ժամանակակից վարկած մեկնաբանումից հետո էլ, այնուամենայնիվ, շարունակում են մնալ անպատասխան հարցեր:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

2053-ԻՆ ԿՀԱՍՆԵՆՔ 10 ՄԻԼԻԱՐԴԻ ԲՆԱԳԾԻՆ

Երկիր մոլորակի բնակչության թիվը 10 միլիարդի կհասնի արդեն 2053 թվականին, թեեւ Ռուսաստանի եւ Ուկրաինայի բնակիչների թիվը կկրճատվի 7,9 եւ 9 միլիոնով, իսկ ճապոնիայում «ռեկորդային»՝ 24,7 միլիոնով: Այդ մասին հայտնել է Վաշինգտոնի բնակչության թվաքանակի բյուրոն (PRB):

«Չնայած ամբողջ մոլորակում ծնելիության հաճախականության ընդհանուր նվազմանը, Երկրի բնակչության աճի արագությունը կմնա բարձր մակարդակում, որը կբավականացնի 10 միլիարդի նշագծին «հասնելու» համար: Անշուշտ, տարբեր տարածաշրջաններում պատկերը զարմանալիորեն կտարբերվի. օրինակ՝ Եվրոպայի բնակիչների թիվը կշարունակի նվազել, մինչդեռ Աֆրիկայի բնակչության թիվը մինչեւ 2050 թվականը կկրկնապատկվի»,- հայտարարել է Բյուրոյի նախագահ եւ տնօրեն Ջեֆրի Ջորդանը:

PRB-ի նոր կանխատեսումների համաձայն, մոլորակի բնակչության թվաքանակն արդեն 2050 թվականին կմոտենա 9,9 միլիարդի, իսկ 2053 թվականին կանցնի 10 միլիարդի սահմանը: Այդ աճի մեծ մասը բաժին կընկնի Աֆրիկային. վերջինիս բնակչության թիվն այդ ժամկետում կաճի մինչեւ 2,5 միլիարդ: Ըստ որում, Ամերիկայի բնակիչների թիվը կավելանա ընդամենը 223 միլիոնով, Ասիայինը՝ 900 միլիոնով, իսկ Եվրոպայի բնակիչների թիվը կկրճատվի մոտավորապես 12 միլիոնով:

Այդուհանդերձ, բնակչության թվաքանակով երկրների «տասնյակի» առաջին եռյակը կմնա նախկինը՝ Հնդկաստան, Չինաստան եւ ԱՄՆ:

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

ԱՅՆ, ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՄՈՒՐ ԸՆՏԱՆԻՔ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Բնականաբար, բոլոր չափահաս մարդկանց մոտ, անկախ սեռից, այս հարցը վաղ թե ուշ իր մասին հիշեցնում է: Իրոք, ի՞նչ է պետք ամուր ընտանիք ստեղծելու համար: Ստորեւ ներկայացնում ենք մի խումբ փորձագետների կողմից այդ հարցով իրականացված ուսումնասիրության հանրագումարային եզրակացությունները:

Հասունություն - Ամուսնական դաշինք կնքելիս՝ պետք է հասկանալ, որ դուք արդեն հասուն մարդիկ եք եւ ստեղծում եք ձեր սեփական ընտանիքը, որը զգացմունքային առումով պետք է անջատել մանկության ընտանիքից, այսինքն՝ ազատվել մայրիկի եւ հայրիկի հովանավորությունից, հաստատուն կանգնել սեփական ոտքերի վրա, լիովին նվիրվել նորաստեղծ ընտանիքի կառուցման գործին, միաժամանակ՝ ամուր կապեր պահպանելով ծնողների հետ:

Հավասարակշռություն - Պետք է կարողանալ ընտանեկան նավի ղեկն այնպես պահել, որ այր եւ կին, լինելով մեկ մարմին, միաժամանակ չկորցնեն իրենց անհատականությունը: Յուրաքանչյուրն իրեն պետք է ընտանիք կոչվող ամբողջական մարմնի մի մասնիկն զգա, սակայն դրա համար ստիպված չլինի ճնշվել կամ կաշկանդվել:

Դիմացկունություն - Բեկումնային եւ հակասական պահ է երեխայի ծնունդը: Այդ ժամանակ երջանիկ ծնողների երջանկությունը զուգակցվում է նաեւ սթրեսով, ինչն անխուսափելի է, քանի որ պետք է վարժվել, որ դուք, միմյանց սիրող ամուսիններ լինելուց բացի, նաեւ ծնող եք:

Ճգնաժամերը հաղթահարելու ունակություն - Անբարենպաստ հանգամանքները հաղթահարվում են՝ հիմնվելով այն գաղափարի վրա, որ արդեն կա ամենագլխավոր նվաճումը՝ ընտանիքը:

Բացասական լիցքերից ազատվելու ունակություն - Վիճելիս կամ զայրանալիս՝ փորձեք զգացմունքներն արտահայտել առանց հարաբերությունները փչացնելու: Իրար հետ պայման կապեք. զայրույթն ու անհամաձայնությունը չեն կարող ձեր ընտանիքը քայքայել: Պետք չէ թաքցնել սեփական կարծիքը՝ վախենալով, որ այդ դեպքում հետեւանքները կարող են ճակատագրական լինել:

Հումորի զգացում - Կատակներն ու հումորը հաջողակ ընտանիքների հավատարիմ ուղեկիցներն են, որոնք օգնում են հաղթահարել դժվարություններն ու ձանձրույթը:

Հոգատարություն - Հոգ տարեք միմյանց նկատմամբ, սակայն ոչ ձանձրացնելու աստիճան: Առաջնահերթ պայման է զուգընկերոջ համար հարմարավետություն ապահովելն ու նրա պահանջների հնարավոր բավարարումը:

ԻՆՉՊԵՍ ՈՐՈՇԵԼ ՄԱՏԱՆՈՒ ՉԱՓԸ

Չեզ ընդամենը 28 վայրկյան է պետք մատանու ձեր չափսն իմանալու համար: Սովորաբար, մարդիկ դա պարզում են ոսկերչական խանութում գնումներ կատարելիս:

Վաճառողն օգնում է ոչ միայն զարդի, այլեւ անհրաժեշտ չափսի ընտրության հարցում: Սակայն պատահում է նաեւ, որ, մատանին ձեռք բերելուց ժամեր անց, պարզվում է, որ այն ընկնում է մատից կամ, հակառակը՝ սեղմում մատը: Դրա պատճառն այն է, որ օրվա ժամից, տարվա եղանակից, ինքնազգացողությունից եւ օրգանիզմի վիճակից կախված՝ մատի հաստությունը կարող է փոփոխվել: Ճիշտ ընտրության մեջ համոզված լինելու համար, պետք է օրվա տարբեր ժամերի առնվազն 3 անգամ մատանին փորձել: Այդ պատճառով էլ, մատանի գնելիս, պետք է նախապես պատրաստվել եւ ճիշտ իմանալ չափը:

Հարկավոր է թելով մատի չափը վերցնել, թելի երկարությունը չափել քանոնով եւ միլիմետրերով: Արդյունքը հաշվիչի օգնությամբ բաժանել 3,14-ի:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

Մարդ տարին մեկ է ծնունդը նշում, բայց պետք է նշի ամեն առավոտ:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՀԱԿՅԱՆ
(1936-2013)
Երգիծաբան, բանաստեղծ

Ո՜վ մարդ, երբեք հարբածի պես դու քո ուժով մի պարծենա:

ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ
(1172-1216)
Վրաց բանաստեղծ

Ով հնարավորություն ունի կանխել հանցանքը, բայց դա չի անում, նա նպաստում է դրան:

Ա.Ս. ԷԿԶՅՈՒՊԵՐԻ
(1900-1944)
Ֆրանսիացի գրող

Բնավորությունը ոչ այլ ինչ է, քան երկարատեւ հմտություն:

ՀԵԳԵԼ
(1770-1831)
Գերմանացի փիլիսոփա-իդեալիստ

Խելամի՜տ կին: Եթե դու ցանկանում ես, որ ամուսինդ ժամանակն անցկացնի քեզ հետ, ապա հոգ տար այն մասին, որպեսզի նա ուրիշ ոչ մի տեղ չգտնի այդքան հաճելի բավականություն ու քնքշություն:

Դ.ԴԻԴՐՈ
(1713-1784)
Ֆրանսիացի փիլիսոփա

Տիեզերքի նպատակն է ոգու զարգացումը, իսկ ոգու զարգացման առաջին պայմանն ազատությունն է:

Կ. ՑԻԱԼԿՈՎՍԿԻ
(1857-1935)
Ռուս գիտնական

Փոքր վշտերը շատախոս են, խորունկ վիշտը՝ անխոս:

Ա.ՆԱԶԱՐՅԱՆ
«Վրաստանի» ընթերցող

²Ü°Î¸àÎÜ°ð

☺ *Ամուսինը.*

- Ինչպե՞ս կարելի է մեկ օրվա ընթացքում ծախսել մեկ ամսվա աշխատավարձը:

Կինը.

- Թե փողը ստացել ես, գնանք, ցույց կտամ:

☺ *Հարբած հայրը մանկապարտեզում.*

- Ո՞րն է ձեր որդին:

- Միեւնույն է, մեկնումեկին տվեք, չէ՞որ վաղը կրկին բերելու ենք:

☺ *Հատկանշանակ փաստ. «Մերսեդեսի» բանալին բացում է նաեւ կնոջ սիրտը:*

☺ *Պետը.*

- Ցավոք, Ձեր աշխատավարձը ավելացնել չենք կարող:

Աշխատակից.

- Գուցե այդ դեպքում այն ամսական երեք անգա՞մ հանձնեք:

☺ *Զրուցում են ընկերները.*

- Այս ամառ որտե՞ղ հանգստացար:

- Գրպանիս տարողության խորհրդով պարզվեց, որ աշխատանքից չեմ հոգնել:

☺ *- Եթե իմանաս, որ ամուսինդ դավաճանում է, կբաժանվե՞ս:*

- Ի՞նչ, այդ սրիկային դրան համար չեմ պարգեւատրի:

☺ *Ամուսինը.*

- Ես այնքան եմ վստահում, որ կարող եմ պահել քեզ նման երեք կին:

Կինը.

- Շատ լավ, ուրեմն մեզ հետ մայրս ու տատս կապրեն:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ԱՐՑԱԽԸ ՏՈՆՈՒՄ Է ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱԿԸ

Աշխարհասփյուռ հայությունը սեպտեմբերի 2-ին նշեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության տոնը: 25 տարի առաջ՝ 1991թ. սեպտեմբերի 2-ին, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի եւ դեռեւս չհայաթափված հարակից Շահումյանի շրջանի բոլոր մակարդակների խորհուրդների ժողովրդական պատգամավորների մասնակցությամբ տեղի ունեցած նստաշրջանն ընդունեց «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին» հռչակագիրը:

Աշխատանքային այցով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գտնվող Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը Ստեփանակերտում մասնակցեց ԼՂՀ հռչակման 25-րդ տարեդարձին նվիրված միջոցառումներին:

Սերժ Սարգսյանը ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի, Արցախի Հանրապետության հռչակման 25-րդ տարեդարձին մասնակցելու նպատակով Հայաստանից ժամանած պաշտոնական պատվիրակության, արցախահայության եւ արտերկրից ժամանած հյուրերի հետ Վերածննդի հրապարակից հանդիսավոր քայլերթով այցելեց Ստեփանակերտի հուշահամալիր, ծաղկեպսակ դրեց եւ հարգանքի տուրք մատուցեց Արցախի անկախության համար զոհված հայորդիների հիշատակին: Սերժ Սարգսյանը Արցախյան ազատամարտում զոհվածների պանթեոնում ծաղիկներ դրեց ազատամարտի նահատակների եւ ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին նախագահ Արթուր Մկրտչյանի շիրիմներին:

Տոնական միջոցառումներն Արցախում շարունակվում են:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ

Հայաստանի կառավարությունը հավանություն տվեց Տեղական ինքնակառավարման մարմինների մասին որոշման նախագծում փոփոխություններ կատարելու մասին հարցին:

Արդարադատության նախարարության տեղեկատվությամբ, փոփոխությունները բխում են 2015 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված նոր սահմանադրությունից: Ըստ այդմ, 3 հազար եւ ավելի բնակիչ ունեցող համայնքների համար սահմանվել է պարտադիր ինտերնետային պաշտոնական կայք ունենալու պարտավորություն:

Սահմանվում է նաեւ վարչական ներկայացուցչի հաստիքի առկայություն բոլոր բնակավայրերի համար (նախկինում՝ 100-ից ավելի բնակիչ ունեցող բնակավայրերում), ինչպես նաեւ վարչական ներկայացուցչի կողմից համայնքի ավագանու նիստի մասնակցության եւ օրակարգում հարց ներկայացնելու հնարավորության ընձեռում: Սահմանադրության համապատասխանեցման դեպքում, կլինի լիազորությունների ապակենտրոնացում, մասնավորապես՝ կրթության եւ առողջապահության բնագավառներում:

Այսպես, հանրակրթական դպրոցների գործունեության կազմակերպումն ու կառավարումը կհանձնվի 25 հազար եւ ավելի բնակիչ ունեցող համայնքներին, իսկ բժշկական ամբուլատորիաներն ամբողջությամբ կդառնան համայնքային ենթակայության: Նախատեսվում է համայնքում ներդնել սոցիալական աշխատողի ինստիտուտը, 5000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքի համայնքապետարանի աշխատակազմում էլ կստեղծվի համայնքի սոցիալական աշխատողի հաստիք:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՍՆՈՒՆԴ՝ 83 ՀԱԶԱՐ ԱՇԱԿԵՐՏԻ ՀԱՄԱՐ

Հայաստանի կառավարությունը՝ ի դեմս Հայաստանի կրթության եւ գիտության նախարարության, եւ ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակը պայմանավորվածություն են ձեռք բերել «Հայաստանում կայուն դպրոցական սնունդ» ծրագրի հիմնական պայմանագրում փոփոխություններ կատարելու եւ ժամկետը երկարաձգելու մասին: Այդ կապակցությամբ, Հայաստանի կրթության եւ գիտության նախարար Լեւոն Մկրտչյանը եւ ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակի տնօրեն Պասկալ Միշոն ստորագրել են համաձայնագիր՝ Հայաստանում «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը մինչեւ 2017թ. հունիսի 30-ը երկարաձգելու վերաբերյալ:

Նշենք, որ Հայաստանում «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը մեկնարկել է 2010 թվականից՝ Պարենի համաշխարհային ծրագրի աջակցությամբ: 2013 թվականից սկսած՝ ծրագրի իրականացմանը միացել է Հայաստանի կառավարությունը՝ ընդլայնելով ծրագրի ծավալները: Ծրագրում, ընդհանուր առմամբ, ընդգրկված է ՀՀ մարզերի դպրոցների տարրական դասարաններում սովորող շուրջ 83 հազար աշակերտ:

ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐԻ ՄԵԴԱԼԱԿԻՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՆՍՏԱՎԱՅՐՈՒՄ

Օգոստոսի 31-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն հյուրընկալեց հանրակրթական դպրոցների՝ միջազգային մրցույթներում հաղթած եւ օլիմպիադաներում մեդալների արժանացած աշակերտներին:

Հայաստանի նախագահի նստավայրում, մասնավորապես, հյուրընկալվել էին Հայաստանի հանրակրթական ուսումնական հաստատությունների 2015-2016 ուսումնական տարվա մեդալակիր շրջանավարտները, դպրոցականների միջազգային առարկայական օլիմպիադաների մեդալակիրները, «Կենգուրու» միջազգային մաթեմատիկական մրցույթի հաղթող եւ մարզերում ու տարիքային խմբերում լավագույն արդյունք ցուցաբերած աշակերտները, ինչպես նաեւ «Մեղու» մրցույթի մրցանակակիրները:

Շնորհավորելով պարգեւատրված աշակերտներին՝ Սերժ Սարգսյանը նրանց մաղթեց նորանոր հաջողություններ:

Հանդիպման ընթացքում աշակերտները նախագահին հարցեր ուղղելու հնարավորություն ստացան: Հարցերը հիմնականում առնչվում էին բուհերի վարձավճարներին, ինչպես նաեւ մեդալակիր աշակերտներին արտերկրում սովորելու համար տարկետման հնարավորություն տրամադրելուն:

Հանդիպման ավարտին, ԿԳ նախարար Լեւոն Մկրտչյանը մեդալներ շնորհեց դպրոցների աշակերտներին եւ շրջանավարտներին:

ՆՎԱԶԵԼ Է ԱՎՏՈՎԹԱՐՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԶՈՀԵՐԻ ԹԻՎԸ

Ընթացիկ տարում Հայաստանում զգալիորեն նվազել է ճանապարհատրանսպորտային պատահարների եւ, դրանց հետեւանքով, զոհերի ու վիրավորների թիվը:

Ինչպես տեղեկացրին Հայաստանի ճանապարհային ոստիկանության ճանապարհապարեկային ծառայության բաժնից, վիճակը կարելի է բավարար գնահատել, քանի որ վերջին 5 տարիներին տարեցտարի աճող միտումի պայմաններում, ընդհակառակը, պատկերը փոխվել է: Այսօրվա դրությամբ, տարեսկզբից Հայաստանում գրանցվել է 1972 ճանապարհատրանսպորտային պատահար, որոնց հետեւանքով զոհվել է 150, վիրավորվել՝ 2794 մարդ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, պատահարների թիվը նվազել է 174-ով, զոհերի թիվը՝ 53-ով, իսկ վիրավորներինը՝ 253-ով: Սրանք վթարայնության վիճակը բնութագրող հիմնական ցուցանիշներն են, որոնցով կարելի է գնահատական տալ: 2011թ. սկսած՝ երկրում տարեցտարի աճի միտում էր նկատվում, եւ առաջին անգամ այդ միտումը կանգնել է:

Դա պայմանավորված է երեք գործոններով: Առաջինը՝ խստացվել է վարչարարությունը ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոց վարող վարորդների նկատմամբ: Անցած տարվա համեմատ, կրկնապատկվել է ոչ սթափ վիճակում հայտնաբերված վարորդների թիվը: Հաջորդ գործոնը ակտիվ պայքարն է առջեւի թաղանթապատված դիմապակիներով երթեւեկող տրանսպորտային միջոցների վարորդների դեմ: Երրորդ գործոնը սահմանված արագության գերազանցման փաստերի հայտնաբերման ուղղությամբ տարվող աշխատանքն էր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵՑ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

Գիտելիքի միջազգային օրը՝ սեպտեմբերի 1-ին, Հայաստանի դպրոցներ առաջին անգամ մուտք գործեցին շուրջ 40 հազար դպրոցահասակներ, թեպետ թե՛ աշակերտների եւ թե՛ ուսանողների վերջնական թիվը պարզ կլինի մի փոքր ավելի ուշ:

Աշակերտների նախնական թիվն արդեն իսկ գերազանցում է 2015 թվականի ցուցանիշը, որը 39 հազար 246 էր:

Այս տարի նախատեսվում են փոփոխություններ ուսումնական պլանում՝ երկրորդ կիսամյակում բեռնաթափելու են ուսումնական ծանրաբեռնվածությունը առաջինից չորրորդ դասարանցիների համար:

Հայաստանում կա 1430 դպրոց, որից 850-ը 300-ից պակաս աշակերտ ունի, իսկ շուրջ 400 դպրոց՝ 500-ից պակաս:

335 ՀԱԶԱՐ ԵՎՐՈՅԻ ՎՃԻՌ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄ

Վերջին երկուսուկես տարիների ընթացքում Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը Հայաստանի դեմ կայացրել է 335 հազար եվրոյի վճիռ: Այդ մասին գործադիրի նիստում նշեց կառավարության աշխատակազմի ղեկավար, նախարար Դավիթ Հարությունյանը՝ ներկայացնելով վիճակագրական տվյալներ, թե վերջին տարիներին Հայաստանը որքան գումար է վճարել ՄԻԵԴ-ի՝ Հայաստանի դեմ կայացված վճիռների համար:

2014 թվականին Հայաստանի դեմ կայացվել է չորս վճիռ, որի դիմաց վճարվել է 166 հազար եվրո, 2015-ին կայացվել է ութ վճիռ եւ վճարվել է 86 հազար եվրո, իսկ արդեն 2016-ին կայացվել է կրկին ութ վճիռ եւ վճարվել 83 հազար եվրո:

Ըստ Դավիթ Հարությունյանի «Պատճառները, կարծում եմ, պարզ են, դա մեր դատական համակարգում առկա սխալներն են, իհարկե, բոլոր երկրներում էլ լինում են սխալներ, բայց երբ երկրում սպառվում են սխալը շտկելու միջոցները, մարդիկ դիմում են ՄԻԵԴ»:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԵԱՀԿ ԱԳ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՄԱՆԸ

Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը Պոտսդամում մասնակցել է «Միասին դիմագրավելով ընդհանուր մարտահրավերներին» խորագրով ԵԱՀԿ մասնակից երկրների արտգործնախարարների ոչ պաշտոնական հանդիպմանը:

ԵԱՀԿ-ում գերմանական նախագահության կողմից կազմակերպված հանդիպմանը մասնակցում էին ԵԱՀԿ 57 մասնակից երկրի Եվրոպական միության բարդրաստիճան պատվիրակություններ:

Հանդիպմանը Էդվարդ Նալբանդյանը հանդես է եկել ելույթով, որտեղ ներկայացրել է Հայաստանի տեսակետները՝ ԵԱՀԿ տարածքում անվտանգության ապահովման վերաբերյալ:

ԴԵՐՍԻՄՅԻ ՀԱՅԵՐԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Դերսիմյի հայերի ազգային ինքնությանը վերադարձի շրջանակում, Ստամբուլի Սուրբ Ստեփանոս հայկական եկեղեցում, օգոստոսի 14-ին զանգվածային մկրտություն է տեղի ունեցել:

«Ակոս» թերթն այդ առնչությամբ հայտնում է, որ Թուրքիայում շարունակվում է ազգային ինքնությանը վերադառնալու համար Հայոց ցեղասպանության տարիներին ճնշումների արդյունքում հավատափոխ՝ մուսուլման դարձած հայերի քրիստոնեական արմատներին վերադարձի պայքարը: Տեր հայր Տրդատ Ուզունյանի կողմից անցկացված զանգվածային մկրտության արարողությամբ քրիստոնեություն է ընդունել դերսիմյի 8 հայ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐ

4.09.2016. Բարեկենդան Սուրբ Խաչի պահոց

Բարեկենդանը պահքին նախորդող կիրակին է, որը նվիրված է տաղավար տոներից մեկին՝ Խաչվերացին եւ տեւում է երկուշաբթիից մինչեւ շաբաթ:

8.09.2016. Սուրբ Կույս Մարիամի ծնունդն Աննայից

ՏԱՐԵՐՔ

5-ԲԱԼԱՆՈՅ ՓՈԹՈՐԻԿ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՍԵՎԾՈՎՅԱՆ ԱՓԻՆ

Սեպտեմբերի 1-ին, տեղատարափ անձրեւի հետեւանքով, Բաթումի քաղաքի ափամերձ մի քանի փողոցներ հայտնվել էին ջրի տակ, իսկ փոթորիկը Վրաստանի սեւծովյան ափին կազմել էր չորս-հինգ բալ:

Փոթորիկը շարունակվել է մինչեւ երեկո, իսկ սեպտեմբերի 2-ի առավոտյան ծովն աստիճանաբար հանդարտվեց: Այդ մասին տեղեկացրել է Վրաստանի Շրջակա միջավայրի ազգային գործակալությունը: Բաթումիում աշխատում են հատուկ ծառայություններ, որոնք կարգի են բերում քաղաքի փողոցները:

Բաթումիի մերձակա Չաքվի ավանում վատ եղանակը նույնպես լուրջ վնասներ է հասցրել: Դումբաձեի փողոցի վեց տուն ջրով է լցվել, իսկ առավոտյան Բաթումի-Քուբուլեթի-Չաքվի ճանապարհահատվածում ափերից դուրս է եկել գետն ու ջրածածկ արել կենտրոնական մայրուղին:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹ

ՎՐԱՑԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒՅՑԸ՝ Samsung-ԻՆ ՄՐՑԱԿԻՑ

Մի քանի շաբաթ առաջ շուկայում հայտնվեց Թբիլիսիի AG Telekom գործարանի կողմից արտադրված առաջին վրացական հեռուստացույցը:



Ինչպես հայտնում է գործարանի տնօրեն Միխեիլ Ղլոնտին, հունիսի 1-ից, երբ հեռուստացույցը հայտնվել է շուկայում, եւ առ այսօր արդեն վաճառվել է 150 նմուշ, իսկ այդ ցուցանիշը լրիվությամբ համապատասխանում է մենեջմենթի պահանջներին:

«Մենք սպասում ենք մոտ ժամանակներում առեւտրական ծավալների ավելացման: Ինչ վերաբերում է Samsung-ի հետ մրցակցությանը, ապա մենք հասանք դրան, վկա՝ մեր հեռուստացույցի մեծ պահանջարկն է: Մեր արտադրանքը լրիվությամբ մրցունակ է թե' որակով, թե' արժեքով: Ինչ վերաբերում է գնին, ապա 32 դյույմանոց հեռուստացույցն արժե 479, իսկ 40 դյույմանոցը՝ 699 լարի»,- հայտարարեց Միխեիլ Ղլոնտին: Նրա խոսքերով, սեպտեմբերից ծրագրվում է 50 դյույմանոց հեռուստացույցերի, ինչպես նաեւ Սմարտ հեռուստացույցների թողարկումը: Ծրագրվում է նաեւ արտադրանքի արտահանումը: Մասնավորապես, մինչեւ տարեվերջ 200 հեռուստացույց փորձնական տարբերակը կառաքվի Ադրբեջան եւ Լատվիա:

AG Telekom-ը, հեռուստացույցներից բացի, ծրագրում է նաեւ թողարկել բջջային հեռախոսներ, թեպետ սա մոտ ապագայում չի նախատեսվում: Առաջիկայում ընկերությունն իր ողջ ուշադրությունը բեւեռելու է հեռուստացույցների տեսականու ընդլայնման վրա: Սկզբնական փուլում ընկերությունը ծրագրում է թողարկել 1200 հեռուստացույց:

ՄԱՐԻԱՄՈԲԱ

ՇՆՈՐՀԱՎՈՐՈ՛ՒՄ ԵՆՔ, ՄԱՐԻԱՄՆԵՐ

Օգոստոսի 28-ին Վրաստանը նշեց Սուրբ Մարիամի տոնը՝ Մարիամոբան:

Ավանդույթի համաձայն, այդ օրը ծնված աղջիկ երեխաներին կոչում են Մարիամ:

Հատկանշական է, որ, վիճակագրական տվյալներով, Վրաստանում 2016 թվականի սկզբից նորածին աղջիկների շրջանում ամենատարածված անունը Մարիամն է:

Վիճակագրական տվյալներով, Վրաստանում Մարիամ անունն է կրում 106931 աղջիկ, Մարինե՝ 26987-ը, Մարինա՝ 25113-ը, Մարիա՝ 6057-ը, Մարի՝ 5977-ը, Մարիկա՝ 5933-ը, Մարո 2451-ը, Մարիտա 993-ը, Մարուսյա 500-ը, Մարուս՝ 259-ը, Մարիկո՝ 65-ը, Մարիշկա՝ միայն մեկը:

Մարիամը հրեական ծագման անուն է եւ մի քանի նշանակություն ունի՝ «կամակոր», «անհնազանդ», «մերժող», «Աստծո սիրեցյալ»:

ԸՄԲՇԱՄԱՐՏ

ՏԱՐԲԵՐ ԱՐԺՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԴԱԼՆԵՐ՝ ԱՇԽԱՐՀԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ֆրանսիական Մակոն քաղաքում եզրագիծը հատեց հունա-հռոմեական ոճի ըմբշամարտի աշխարհի երիտասարդական առաջնությունը:

Վրաստանի հունա-հռոմեական ոճի երիտասարդական հավաքականը իր ակտիվում գրանցել է 4 ոսկե եւ մեկ բրոնզե մեդալ ու նախորդ տարվա նման այս տարի էլ թիմային հաշվարկում 51 միավորով նվաճել աշխարհի ուժեղագույն երիտասարդական թիմի կոչումը՝ հետեւում թողնելով Ռուսաստանի (40 միավոր) եւ Իրանի (34 միավոր) հավաքականներին:

Աշխարհի երիտասարդական առաջնության չեմպիոններ դարձան Դաթո Չխարտիշվիլին (55կգ քաշային կարգ), Ռամազ Զոիձեն (66կգ), Զվիադ Պատարիձեն (120կգ) եւ Գիորգի Մելիան (96կգ): 50կգ քաշային կարգում հաղթողների պատվանդանի երրորդ աստիճանը զբաղեցրեց Վրաստանի հավաքականի անդամ Նուգզար Օուրծումիան:

Հայաստանի հունա-հռոմեական ոճի ըմբշամարտի երիտասարդական հավաքականը առաջնությունից վերադարձավ երկու բրոնզե մեդալով: Պատվանդանի երրորդ աստիճանը զբաղեցրին Հայաստանի հավաքականի անդամներ Սերգեյ Սիմոնյանը (50կգ) եւ Էդգար Խաչատրյանը (120կգ):

Այսօր՝ սեպտեմբերի 3-ին, Մակոնում մեկնարկեց ազատ ոճի ըմբշամարտի աշխարհի երիտասարդական առաջնության մրցաշարը:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Կոմիտասի երգերից: 3.Իտալացի հայտնի նկարիչ ... Սանտի: 9.Վրաստանի Գանձա գյուղում ծնված մեծ բանաստեղծի անունը: 11.«... տարազով, թել-թել մազերով, իմ յարն եկավ-անցավ հազար նազերով» (ժող.երգ): 14.Գյուղ Հայաստանի Արագածոտնի մարզում: 15.Բազմաթիվ ծաղիկներից եփված անուշահոտ նյութ, որն օգտագործվում է եկեղեցում (բրբ.): 18.Համեմունք, առանց որի ճաշը համ չի ունենա: 19.Ցուցական դերանուն: 20.«Սարդարապատ»-ի երաժշտության հեղինակ ... Գեւորգյան: 22.Ապակու տեսակ, որն օգտագործվում է ակնոցների համար: 25.Յոթերորդ նոտա: 26.Վրաց երգիչ ... Պավլիաշվիլի: 28.Թումանանի պատմվածքներից «Իմ ընկեր ...»: 30.Ուստր եւ ...: 33.Իգական անուն: 34.Ոստայնագործ միջատ: 35.Փոխադարձ դերանուն: 37.Ամայի, անմարդաբնակ: 39.Վրացական պաղպաղակ: 40.Հայուհու անուն: 43.Գովազդային գործակալություն Թբիլիսիում: 44.Գրական ստեղծագործության տեսակ: 46.Քաղաք եւ նահանգ Արեւմտյան Հայաստանում: 48.Քաջ, անվախ: 49.Նախկին Դորպատը: 51.Հացաբույսի տեսակ: 53.Չինգիզ ..., Բաթու ...: 55.Հայաստանի «Հոգու եւ պարի թատրոնի» ղեկավար ... Դեւոյան: 58.Ապրանքի հատկանիշ: 59.Արձան, հուշարձան: 61.Հայտնի առակագիր: 63.Օժանդակ բայ: 64.Պայմանի շաղկապ: 65.Գազանի բույն:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.«...դ փռանգի ատլաս է» (Սայաթ-Նովա): 3.1000 թվին փոխարինող տառը հայոց այբուբենում: 4.Վախ, սարսափ: 5.Չորրորդ նոտան: 6.Հայաստանի ԳՄ երջանկահիշատակ նախագահ Լեւոն ...: 7.Հայ պատմիչ ... Կողբացի: 8.Դուդուկահար ... Հովսեփյան: 10.Պետություն Եվրոպայում: 12.«Օտար. ...յի ճամփեքի վրա» (Ավ.Իսահակյան): 13.Երկար գետ Աֆրիկայում: 16.Պասուց տոլմայի բաղադրամաս: 17.Վրաց երգչուհի ... Բրեգվաձե: 20.Հանրահայտ դերասանուհի ... Ոսկանյան: 21.Անֆիլտր ծխախոտ: 23.Վրաստանում ազգային փոքրամասնությունների հարցերով նախագահի խորհրդական ... Շամանիդի: 24.Կյանք արարող, կենսատու: 25.Երգչուհի ... Ռուբենյան: 27.Հայկական ներկ՝ ... կարմիր: 29.Պետություն, որի մայրաքաղաքը Մոգադիշոն է: 31.Հայկական էպոսը կոչվել է նաեւ «... ծռեր»: 32.Արաքս գետի անվանումներից: 36.Ժխտական նախածանց: 38.Վրացական ֆիլմ «...ի այրին»: 41.Գյուղ Վրաստանի Ախալքալաքիի շրջանում: 42.Հայոց ցեղասպանության զոհ Երվանդ Սրմաքեշխանլյանը: 45.Հայկական ֆիլմ «... մը երկինք»: 46. ...ng, ...ոտ: 47.Հայերենի վերջածանց: 48.Տարի: 50.Հայ ֆիդայի: 52.Հայկական պար: 54.Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր ... քահանա Ղուշչյան: 56.Ընտանի կենդանի: 57.Հովի.Թումանյանի ծննդավայրը: 60.«Ես ... անուշ Հայաստանի» (Ե.Չարենց): 62...., վեվ, տյուն, րե:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 6.Պնդուկ: 8.Ալյուր: 10.Սարդ: 11.Քար: 13.Մաքուր: 14.Ապօրինի: 16.Արոր: 17.Մուկ: 18.Սիբիր: 20.Կեշա: 21.Կոչ: 22.Սմիթ: 26.Անագ: 28.Կլիմա: 31.Դաղ: 32.Բոց: 34.Ակիշ: 35.Ուզալա: 36.Լկամ: 38.Ֆազ: 41.Հասկ: 43.Թամարա: 45.Օսլա: 48.Դոն: 49.Վահե: 52.Պիրկ: 53.Սազ: 54.Գազ: 55.Ճանկ: 56.Ճիչ: 57.Յարա: 58.Աղտ: 59.Նիշ: 60.Թան:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ձնծաղիկ: 2.Նկար: 3.Դադար: 4.Այսօր: 5.Արքիմեդ: 7.Ուսուցիչ: 9.Երիկամ: 12.Անուշ: 15.Պոլինա: 19.Բոբիկ: 23.Մադամ: 24.Թաղում: 25.Մաշկ: 27.Հոլ: 29.Լադա: 30.Միլ: 32.Բատա: 33.Ցատկ: 37.Ասադ: 39.Ջիլինա: 40.Կանաչի: 41.Հավ: 42.Սահարա: 44.Մոսին: 46.Սպա: 47.Արկղ: 50.Ագաթ: 51.Եզան:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445